032101.00.6 Լրագրություն
032101.01.6Մարզական լրագրություն
Լրագրության բակալավր

<u>Ընդհանրական վերջնարդյունքներ</u>

1. Մասնագիտական կրթության ոլորտի հիմնահարցերի և զարգացման ընդհանուր միտումների խորը իմացություն:
2. Մասնագիտական գործունեության վերջնարդյունքները, համապատասխան նպատակները, խնդիրները և իրականացման մեթոդները որոշելու և գնահատելու կարողություն:
3. Ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն՝ ինքնաքննադատաբար գնահատելով մասնագիտական գործունեության զարգացումն ու որակական փոփոխությունները:
4. հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում՝ ըստ ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթական բաղադրիչների:
5. ԱԻ և պատերազմի ժամանակ պաշտպանական նշանակության հմտությունների և կարողությունների տիրապետում:
6. Օտար լեզվով հաղորդակցվելու համար հիմնարար գիտելիքների տիրապետում:

<u>Մասնագիտական վերջնարդյունքներ</u>

1. Լրագրության սկզբնավորման և զարգացման ընթացքի հանգուցային դրվագների իմացություն:
2. Մարզական լրագրության ու ընդհանուր մեդիամիջավայրի զարգացման սկզբունքների իմացություն:
3. Մասնագիտական գործունեության, մեդիահասկացությունների առանձնահատկություն-ները մեկնաբանելու և վերլուծելու կարողություն:
4. Ընտրած մասնագիտության սոցիալական նշանակությունը, էությունը ընկալելու, առկա հիմնախնդիրները գիտակցելու և լուծման ելքերը որոշելու կարողություն:

<u>Բուն մասնագիտական վերջնարդյունքներ</u>

1. Քննադատական մոտեցման ցուցաբերում մեդիաարտադրանքի, դրա կառուցման եղանակների հանդեպ:
2. Տարբեր լսարանների համար նախատեսված մեդիատեքստեր կառուցելու կարողություններ և հմտություններ:
3. Տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից օգտվելու, մշակելու և տեղեկատվությունը ներկայացնելու կարողություններ:
4. Խմբագրական աշխատանքի կազմակերպման ու վերահսկման, նկարահանման վայրում աշխատելու, հեռուստատեսային հարցազրույցներ ու թոք-շոուներ վարելու, ուղիղ եթերում ստեղծագործելու պատրաստվածություն և հմտություններ:
5. Մասնագիտական ոլորտի հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողություն՝ կիրառելով մշտադիտարկման ու վերլուծման ժամանակակից տեխնոլոգիաները և մեթոդները: